ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՈՒՐԲԱՆ» Կայուն Զարգացման
Հիմնադրամի ղեկավարությանը

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՈՒՐԲԱՆ» Կայուն Զարգացման հիմնադրամի (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2011թ., հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական հոսքերի հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվություն

Նշված ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար պատասխանատվությունը կրում է Ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվություն

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք գործող աուդիտի ստանդարտներին եւ գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են թեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը եւ բացահայտումները: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի

արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ առ 31-ը դեկտեմբերի 2011թ., ինչպես նաեւ նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն:

«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ տնօրեն
Տիգրան Մարտիրոսյան

Աուդիտոր
Անահիտ Մուսաելյան

12 մարտի 2012թ
Երևան